ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

Բարին Աստված այս տարի ևս օրհնում է աշխարհը համայն, ավետիսովը Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի ծննդյան: «Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ մինչև զՈրդին իւր միածին ետ, զի ամենայն որ հաւատայ ի նա, մի կորիցի» (Հովհ. Գ 15):

Խորհուրդներով լի այս պահին, երբ մեր հոգիների հորիզոնի վրա բացվում են «դռները ողորմության», Փրկչի Իշման Սուրբ Սեղանից բերում ենք մեր Մայր Եկեղեցուն և համայն մեր ժողովրդյան, ավետիսը Սուրբ Ծննդյան և մաղթանքը ջերմագին, որ երկնառաք շնորհները կենարար առատապես բաշխվեն մեր օրերի մարդկանց և պետությանց ղեկավարներին, որպեսզի մեր խռովահույզ աշխարհը ավելի ու ավելի մոտենա խաղաղության ափերին, հերջանկություն բոլոր ազգերի: «Զի ոչ առաքեաց Աստուած զՈրդի յաշխարհ թէ դատեսցի զաշխարհ, այլ զի փրկեսցի աշխարհ նովաւ» (Հովհ. Գ 17):

Սուրբ Ծննդյան ավետման ուրախությամբ, հղում ենք Ձեզ Մեր սերն ու գնահատանքը և Մեր օրհնությունները համայն Մեր սիրեցյալ ժողովրդյան, մաղթելով բոլորիդ և բոլորին արևշատ ու խաղաղ օրեր Ձեր հոգեշեն առաքելության ճանապարհին:

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

«Այսուհետև զհետ երթիցուք զխաղաղութեան և զշինութեան որ առ միմեանս» (Հռոմ. ԺԴ 19): Ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվել են ամենաջերմ և հարգալից զգացմունքներով վեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ Հայ Եկեղեցու նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց վանական կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար: